սամբ գիւտերի տեղով (Ասորիք, Հայաստան, Սրիմ)։ Պատկերներից մէկն էլ խաչելութիւնն է. Յիսուս հագել է անթև շապիկ. խաչի թևերի տակ կանգնած են Մարիամ և Յովհաննէս, համեմատաբար աւելի փոքր գիրքով. ոմանց վերայ նաև աջ և ձախ կողմից մի մի զրահաւորուած զինուոր, նիզակով և ձողաբարձ սպունդով կամ առանց այդ նշանների. խաչի հորիզոնական թևերից վեր՝ արեգակ և լուսին։ Զրահաւորուած և իրենց նշանակներով զինուորների ներկայութիւնը խմբանկարի մէջ հարկադրում է նրանց ծագումը Զ–Թ. դար դնել, որից յետոյ արդէն ուրիշ նշաններ են երևան գալիս խաչելութեան պատկերագրութեան մէջ։

Վերև թուած խաչելութեան այս պատկերների մէջ իրենց տարբերութիւններով հանդերձ, նկատւում են ընդհանուրին յատուկ նմանութիւններ. ամէն տեղ խաչեցեալը կենդանի է, աչքերը բաց, դէմքը դէպի առաջ ուղղուած, անտարբեր դէպի շրջապատը, առանց ցաւի նշանների և արեան հետքերի բևեռուած տեղերում։ Ը. դարից արդէն փոփոխութեան է սկսւում ենթարկուել խաչելութիւնը. երևան են գալիս նոր գծեր. Յիսուսի գլուխը թեքուած է դէպի աջ և հոգեկան հաղորդակցութիւն է նկատւում դէպի շրջապատը, մայրը կամ աջակողմեան աւազակը։ Սրանց վերայ աւելանում են յետոյ զուտ ժամապաշտական նշաններ. բևեռների տեղերից կամ խոցուած կողից արիւն է հոսում և աւելի յետոյ այդ արիւնը գետին չի թափւում, այլ հրեշտակի կամ անձնաւորեալ եկեղեցու ձեռքով բռնած բաժակի կամ սկիհի մէջ(1)։ Ապա խաչեցեալի դէմքը, ձեռքերն ու մարմինը ցաւի արտայայտութիւն են ստանում. վիշտ է արտայայտում և շրջապատը։ Բայց այս փոփոխութիւնները կատարւում են հետզհետէ աստիճանաբար, սկզբում պահելով հին շրջանի մի քանի առանձնայատկութիւնները, ինչպէս բաց աչքերը, գրեթէ, մինչև Ժ. դարը և յետոյ, մարմնի ուղիղ դիրքը, ոտքերն իրար կողքի, և այլն։

Այս երկրորդ շրջանի հնագոյն օրինակներն ունինք բիւզանդական սաղմոսարանների պատկերագրութեան մէջ, որոնցից հնագոյնը Խլուդովի սաղմոսարանն է, Թ. դարի գործ(1). այստեղ խաչելութեան երեք մանրանկարներից երկուսը անթև կոլոբիոն ունին, և միայն մէկը մինչև ծնկները հասնող ազգրների ծածկոյթ. բոլորի մէջ էլ խաչեցեալի աչքերը բաց են, գլուխը դէպի աջ թեքուած, նկատւում են բևեռների տեղերը ոտքերի և ձեռքերի վերայ, բայց առանց արեան նշանների և ցաւի արտայայտութեան։ Յիսուս կանգնած է ամենուրեք պատուանդանի վերայ, ուղիղ և հանգիստ, առանց անդամների ձգման, ոտքերը դէպի աջ։ Իններորդ դարի գործ է նաև Գրիգոր Աստուածաբանի ճառերի պատկերագրութիւնը, պատրաստուած բիւզանդական, հայազգի կայսր Բարսեղ Ա.ի (867–886) համար, ըստ Բայսէլի 875 և ըստ Կոնդակովի 880–885 թուին(2). այստեղ խաչելութեան պատկերագրութիւնը կրում է արդէն միջնադարեան արուեստի յայտնի նշաններ. Յիսուս, թէև կենդանի և ուղիղ կանգնած պատուանդանի վերայ և երկար կոլոբիոն հագած, բայց արիւն է հոսում բևեռների տեղերից, Մարիամ գլուխը խոնարհած ողբում է, իսկ Յովհաննէս վշտահար դէմք ունի։ Ժ. և յետագայ դարերի խաչելութիւնները նոր գծերի հետ առանց բացառութեան ունին վերոյիշեալ առանձնայատկութիւնները. տանջուող և մեռնող Յիսուսի պատկերագրութիւնն սկսւում է այսպիսով Թ. դարում և տիրապետող դառնում Ժ.ում։ Աւելացնենք, որ յատկապէս խաչից իջեցնելու և թաղման պատկերագրութիւնները իրական մեծացորդներ ունին բիւզանդական արուեստի մէջ միայն Թ. դարում, Գրիգոր Աստուածաբանի վերոյիշեալ երկի մէջ, իսկ արևմուտքում Թ–Ժ. դարում Անգերի և Էգբերտի աւետարաններում, իսկ ԺԱ. դարից Զալցբուրգում և և Բանբերգում կամ Բեգենսբուրգի շրջանում գրուած ձեռագիրների մէջ(3)։

(1) Հայ մանրանկարչութեան մէջ ԺԱ–ԺԲ. (պատկեր 22, 31) եւ մանաւանդ ԺԳ. դարումն են երեւում այս առանձնայատկութիւնները (տես պատկ. 32, 33, 34)։

(1) Materiali Gretscheskoi rukopisi psaltiria IX weka. N. P. Kondakowa. Moskwa 1878։ Սորան, գրեթէ ժամանակակից է Փարիզի Ազգային մատենի Սաղմոսարանը, իսկ Բարբերինի եւ Լոնդոնի օրինակները ԺԱ. դարի, թէեւ նոյն խմբագրութեամբ։ Sotschinenie Buslaewa. I. 1903. 110։

(2) Beissel. Gesch. der Evnug. Bücher. 40։ Kondakow. Istoria Bisantijskawo Iskusstwa. 108։

(3) Beissel. 128. 273. 316։ Kraus. II. 345. 214։